

**Մրցակցության կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի)
ուսումնասիրման կարգի մասին**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել «Մրցակցության կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) ուսումնասիրման» կարգը (կցվում է):

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածներով նախատեսված պահանջների կատարման փաստն ամրագրող որոշումն ընդունելուց եւ գաղտնի տեղեկությունների պաշտպանության կարգն ու դրանց հրապարակման համար պատասխանատվություն սահմանող համաձայնագիրը գործողության մեջ դնելուց հետո՝ նշված ակտերն ուժի մեջ մտնելու այն ամսաթվից սկսած 10 օրացուցային օրը լրանալուց հետո, որն ավելի ուշ է:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

**Բելառուսի
Հանրապետությունից**

**Ղազախստանի
Հանրապետությունից**

**Ռուսաստանի
Դաշնությունից**

Ս. Ռումաս

Կ. Կելիմբետով

Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
խորհրդի՝ 2012 թվականի նոյեմբերի 23-ի թիվ
97 որոշմամբ

ԿԱՐԳ

մրցակցության կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) ուսումնասիրման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգը մշակվել է «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 15-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա եւ կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից Համաձայնագրի III բաժնում սահմանված մրցակցության կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) ուսումնասիրման ժամանակ (այսուհետ՝ մրցակցության կանոններ):

2. Սույն Կարգում գործածվում են Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված հասկացությունները:

II. Դիմումներին (նյութերին) ներկայացվող պահանջները

3. Մրցակցության կանոնների խախտման մասին դիմումները (այսուհետ՝ դիմումներ) Հանձնաժողով են ներկայացվում իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից:

4. Մրցակցության կանոնների խախտման մասին նյութերը, որոնց ուսումնասիրությունը մտնում է Հանձնաժողովի իրավասության մեջ (այսուհետ՝

նյութեր), Հանձնաժողով են ներկայացվում Մաքսային միության եւ միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների պետական իշխանության մարմինների կողմից (այսուհետ՝ անդամ պետություններ), որոնց իրավասության մեջ է մտնում մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության իրականացումը (այսուհետ՝ լիազոր մարմիններ):

5. Դիմումը ներկայացվում է գրավոր, կամայական ձեւով եւ պարունակում է՝

1) դիմումատուի մասին տվյալներ, այդ թվում՝

ֆիզիկական անձի համար՝ ազգանուն, անուն, հայրանուն (առկայության դեպքում), բնակության վայրի եւ գրանցման հասցե, կոնտակտային տվյալներ (առկայության դեպքում՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, ֆաքսի համար),

իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանում, գտնվելու վայրի հասցե, կոնտակտային տվյալներ (առկայության դեպքում՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, ֆաքսի համար),

2) դիմումատուի մոտ առկա տվյալներն այն անձանց մասին, որոնց մասով ներկայացվում է դիմումը,

3) այն անձանց գործողությունների (անգործության) նկարագիրը, որոնք, դիմումատուի կարծիքով, հակասում են մրցակցության կանոններին,

4) այն պահանջների էությունը, որոնցով դիմում է դիմումատուն:

6. Դիմումին կցվում են՝

1) ֆիզիկական անձի համար՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,

իրավաբանական անձի համար՝ գրանցման վկայականի պատճենը եւ դիմումն ստորագրելու համար անձի լիազորությունները հաստատող փաստաթղթերը.

2) փաստաթղթեր, որոնք, դիմումատուի կարծիքով, առնչվում են դիմումի ուսումնասիրմանը:

7. Նյութերը պարունակում են՝

1) լիազոր մարմնի մոտ առկա տվյալներն այն անձանց մասին, որոնց մասով ներկայացվում են նյութերը,

2) այն անձանց գործողությունների (անգործության) նկարագիրը, որոնք, լիազոր մարմնի կարծիքով, հակասում են մրցակցության կանոններին,

3) մրցակցության կանոնների խախտման նշանների մասին վկայող փաստաթղթեր,

4) նյութերն ուղարկելու համար հիմքը,

5) լիազոր մարմնի աշխատակիցների թեկնածությունները (պաշտոնների նշումով), որոնք պատասխանատու են Հանձնաժողովի հետ փոխգործակցության համար՝ վերջինիս կողմից մրցակցության կանոնների խախտումները քննելիս:

8. Սույն Կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով եւ 7-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում դիմումում (նյութերում) նշվում է դրանք ներկայացնելու անհնարինության պատճառը, ինչպես նաեւ պետական իշխանության ենթադրվող անձինք եւ (կամ) մարմինները, որոնցից կարելի է ստանալ փաստաթղթերը:

Դիմումին (նյութերին) կցվում է ներկայացված բոլոր փաստաթղթերի ցուցակը:

Ֆիզիկական անձի կողմից ներկայացվող դիմումը եւ դրան կցվող փաստաթղթերը պետք է լինեն կարված, համարակալված եւ ֆիզիկական անձի ստորագրությամբ վավերացված:

Իրավաբանական անձի կողմից ներկայացվող դիմումը եւ դրան կցվող փաստաթղթերը պետք է լինեն կարված, համարակալված, ղեկավարի (լիազորված անձի) ստորագրությամբ հավաստված եւ իրավաբանական անձի կնիքով վավերացված:

9. Փաստաթղթերում եւ տեղեկություններում պարունակվող գաղտնի տեղեկությունը չի կարող հիմք ծառայել Հանձնաժողովին դրանք ներկայացնելուց

հրաժարվելու համար: Ընդ որում, դիմումում (նյութերում) նշվում է գաղտնի տեղեկություն պարունակող փաստաթղթերի եւ տեղեկությունների սպառիչ ցանկը:

Հանձնաժողով ներկայացված գաղտնի տեղեկությունների պաշտպանության կարգը եւ դրանք հրապարակելու համար Հանձնաժողովի աշխատակիցների պատասխանատվությունը սահմանվում են անդամ պետությունների համապատասխան համաձայնագրով:

10. Դիմումը (նյութերը), ինչպես նաեւ դրան կցվող փաստաթղթերը եւ տեղեկությունները ներկայացվում են ռուսերենով:

Եթե փաստաթղթերը եւ տեղեկությունները կազմված են օտար լեզվով, ապա դրանց կցվում է սահմանված կարգով վավերացված թարգմանությունը ռուսերենով:

III. Դիմումի (նյութերի) ուսումնասիրման կարգը

11. Հանձնաժողովն ուսումնասիրում է դիմումը (նյութերը) Հանձնաժողովում դիմումը (նյութերը) գրանցելու օրվանից հետո 30 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում:

12. Հանձնաժողով ստացված դիմումը (նյութերը) ուղարկվում է Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամին, որը Հանձնաժողովում դիմումը (նյութերը) գրանցելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմումը փոխանցում է Հանձնաժողովի այն կառուցվածքային ստորաբաժանմանը, որն իր կողմից սահմանված է որպես դիմումի (նյութերի) ուսումնասիրման պատասխանատու:

13. Հանձնաժողովի պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը ոչ ուշ, քան դիմումը (նյութերը) Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամից ստանալու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում դիմումի (նյութերի) եւ դրան կցվող փաստաթղթերի պատճեններն ուղարկում է

լիազոր մարմիններ, ինչպես նաև Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամին այն դեպքում, եթե դիմումը (նյութերը) ներկայացված է բնական մենաշնորհների սուբյեկտ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ:

Նյութերի պատճենները չեն ուղարկվում նյութերը ներկայացրած լիազոր մարմին:

Լիազոր մարմինները ոչ ուշ, քան դիմումը (նյութերը) ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով են ուղարկում դիմումի (նյութերի) ամբողջական եւ բազմակողմանի ուսումնասիրման համար անհրաժեշտ, իրենց մոտ առկա փաստաթղթերը եւ նյութերը, ինչպես նաև առաջարկում են լիազոր մարմինների այն աշխատակիցների թեկնածությունները (նշելով պաշտոնը), որոնք պատասխանատու են Հանձնաժողովի հետ փոխգործակցության համար՝ վերջինիս կողմից մրցակցության կանոնների խախտումների քննություն անցկացնելիս:

Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամը ոչ ուշ, քան դիմումը (նյութերը) ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամին է ուղարկում անդամ պետությունների համաձայնագրերում նախատեսված՝ բնական մենաշնորհներին վերաբերող առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտության մասին եզրակացությունը:

14. Հանձնաժողովի պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը Հանձնաժողովում դիմումի (նյութերի) գրանցման օրվանից հետո 30 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում ուսումնասիրում է դիմումը (նյութերը) եւ ուսումնասիրման արդյունքներով նախապատրաստում է հետեւյալ սահմանումներից մեկը՝

1) մրցակցության կանոնների խախտումների քննություն անցկացնելու մասին,

2) դիմումը (նյութերը) լիազոր մարմիններին ըստ ենթակայության փոխանցելու մասին,

3) դիմումը (նյութերը) վերադարձնելու մասին:

15. Սույն Կարգի 14-րդ կետում նշված սահմանումները ստորագրվում են Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամի կողմից:

Եթե սահմանումը նախապատրաստվում է բնական մենաշնորհների սուբյեկտ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի մասով ներկայացված դիմումի (նյութերի) ուսումնասիրման արդյունքների հիման վրա, ապա այն ենթակա է նախնական համաձայնեցման Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամի հետ:

16. Քննություն անցկացնելու մասին սահմանման մեջ նշվում են՝

1) քննության անցկացումն սկսելու ամսաթիվը,

2) Հանձնաժողովի՝ քննությունն անցկացնող աշխատակիցների մասին տեղեկությունները (այդպիսի աշխատակիցներ են Հանձնաժողովի՝ քննությունների անցկացումը եւ նյութերի նախապատրաստումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցները, իսկ բնական մենաշնորհի սուբյեկտ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի մասով քննություն անցկացնելու դեպքում՝ նաեւ այն աշխատակիցները, որոնց Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամի կողմից տրված են համապատասխան հանձնարարականներ),

3) տեղեկություններ լիազոր մարմինների այն աշխատակիցների մասին, որոնք պատասխանատու են Հանձնաժողովի հետ փոխգործակցության համար՝ վերջինիս կողմից մրցակցության կանոնների խախտումների քննություն անցկացնելիս:

17. Լիազոր մարմիններին դիմումը (նյութերը) ըստ ենթակայության փոխանցելու մասին սահմանումը նախապատրաստվում է այն դեպքում, եթե

դիմումում (նյութերում) նշված խախտումները չեն առնչվում Հանձնաժողովի իրավասությանը եւ, դիմումում (նյութերում) առկա տեղեկությունների հիման վրա կարող է հետետւթյուն արվել անդամ պետության (անդամ պետությունների) մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության խախտման նշանների առկայության մասին: Նշված սահմանումն ուղարկվում է համապատասխան լիազոր մարմին՝ կցելով առկա բոլոր փաստաթղթերը եւ դիմումը (նյութերը) այդ լիազոր մարմնին փոխանցելու հիմնավորումը:

18. Դիմումը (նյութերը) վերադարձնելու մասին սահմանումը նախապատրաստվում է այն դեպքում, եթե դիմումում (նյութերում) բացակայում են սույն Կարգի 5-8-րդ կետերով նախատեսված տեղեկությունները: Նշված սահմանումն ուղարկվում է դիմումատուին (լիազոր մարմնին)՝ կցելով դիմումատուի (լիազոր մարմնի) կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ դիմումը (նյութերը) վերադարձնելու հիմնավորմամբ:

Եթե դիմումը (նյութերը) վերադարձնելու պատճառները հետագայում վերացվել են, ապա դիմումը (նյութերը) կցվող փաստաթղթերի հետ միասին կարող է կրկին ներկայացվել Հանձնաժողով:

19. Սույն Կարգի 14-րդ կետում նշված սահմանման պատճենը ոչ ուշ, քան Հանձնաժողովի՝ մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամի կողմից սահմանումն ստորագրելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմումատուին եւ լիազոր մարմիններ՝ անկախ դիմումի (նյութերի) ուսումնասիրման հիմքից:

Եթե սահմանումը նախապատրաստվել է բնական մենաշնորհների սուբյեկտ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի մասով ներկայացված դիմումի (նյութերի) ուսումնասիրման արդյունքների հիման վրա, ապա դրա պատճենն ուղարկվում է Հանձնաժողովի՝ էներգետիկայի եւ ենթակառուցվածքի հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամին այն ստորագրելու օրվանից 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ: